Հարգելի ընկերներ, զինակիցներ, հարազատներ եւ գործընկերներ.

Շնորհավորում եմ Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհրդի 10-րդ, Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության 3-րդ եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կազմության առթիվ:

Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների իրականացման պայքարի ճանապարհին մենք մի կարեւոր փուլ էլ հաղթահարեցինք միասին, դա Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պետական ինստիտուտների կազմավորման ու ձեւավորման փուլն էր:

Հիմա մեզանից մի քանի բան է պահանջվում, որ ձեւակերպվում է այսպես. <<Լինել կայուն մեր իրավունքների պաշտպանության հարցերում, լինել նրբանկատ ընկերների ու գործընկերների հետ հարաբերություններում, լինել գիտակ մեր իրավական – քաղաքական փաթեթի հարցերում, լինել ինքնավստահ, բայց եւ միաժամանակ խաղաղ ու համբերատար ներքին ու արտաքին հարաբերություններում, որովհետեւ դրանք սկսվելու են:

Եվ որպես ամփոփիչ այս ամենին. <<Մեր զբաղեցրած դիրքերում լինել աննահանջ եւ վստահ, կանգնե՛լ, կանգնե՛լ, կանգնե՛լ այդ դիրքերում, որովհետեւ առավոտյան՝ Բարի լույսի հետ եւ երեկոյան՝ Ծիրանագույնի հետ, Հաղթանակը մերն է լինելու, անպայման:

Հաղթանակը մերն է լինելու...

Տիգրան Փաշաբեզյան
Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետ

04.02.2014